**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի**

# ՈՐՈՇՈՒՄ

**28 Փետրվարի 2023, N 5 - 9**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող Մանվել Արենի Կարապետյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին**

**Լսելով և քննարկելով՝**
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2020 թվականի նոյեմբերի 19-ի N ՈՒՄ /108/ 7-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարում համալսարանի ֆինանսական ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2021 թվականի փետրվարի 23-ի N ՈՒՄ /23/ 11-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով հակառակորդի հետ շփման գծում վնասվածք ստացած, պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով 2022 թվականի հոկտեմբերի 25-ին վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (14.02.2023) դիմած ուսանող Մանվել Արենի Կարապետյանի ուսանողական իրավունքները 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

**Հիմք ընդունելով**, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության բժշկասոցիալական փորձաքննության և աջակցող միջոցներով ապահովման վարչության բժշկասոցիալական փորձաքննական N 4575409 որոշմամբ 2023 թվականի հունվարի 31-ին Մանվել Արենի Կարապետյանին տրվել է 2-րդ խմբի հաշմանդամություն և նա սահմանված ժամկետում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է առողջական և հոգեբանական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Մանվել Արենի Կարապետյանի ուսանողական իրավունքները վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության **«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա ուսուցման պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)** (հաշմանդամության 2-րդ խումբ) **համակարգի 1-ին կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:**
   Հաշվի առնել, որ Մանվել Արենի Կարապետյանը մինչև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելը՝ 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանում չի հանձնել կրթական ծրագրով նախատեսված «Էկոլոգիայի հիմունքներ» (3 կրեդիտ) դասընթացի ստուգարքը, «Միկրոտնտեսագիտության ներածություն» (5 կրեդիտ) և «Փիլիսոփայություն» (3 կրեդիտ) դասընթացների քննությունները:

2. Հանձնարարել ֆինանսական ֆակուլտետի դեկանին՝ կազմել և հաստատման ներկայացնել **Մանվել Արենի Կարապետյանի** 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից 1-ին կուրսում վերականգնվելու համար առաջացած առարկայական ստուգարքի և քննությունների հանձնման ժամանակացույցը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան